ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ Հեքիաթը որպես կրտսեր դպրոցականների ստեղծագործական մտածողության զարգացման միջոց

Հետազոտող ուսուցիչներ՝ Անժելա Աբգարյան
Արուսյակ Եղոյան
«Աբովյանի N 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

Գլուխ 1. Կրտսեր դպրոցականի ստեղծագործական մտածողության ձևավորումն ու զարգացումը.....5

1.1 Հեքիաթի դերը կրտսեր դպրոցականների ստեղծագործական մտածողության զարգացման գործում.....9

Գլուխ 2. Հեքիաթների ժանրային առանձնահատկությունները.....11

Եզրակացություն.....17

Օգտագործված գրականության ցանկ 18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հեքիաթը կրտսեր դպրոցականների և նախադպրոցական տարիքի երեխաների ամենասիրված ժանրերից է: Հեքիաթներն իրենց հերոսական ոգով, առօրյա կենսափորձից բխող առողջ բարոյախոսությամբ և խորիմաստ փիլիսոփայությամբ միշտ էլ գրավել են բոլոր տարիքի ընթերցողներին: Հեքիաթային գույներն են երեխայի մեջ առաջացնում սեր դեպի միջավայրն ու բնությունը, ազգային նիստուկացն ու սովորույթները, կենցաղը: Հեքիաթները ցուցադրում են աշխատավոր մարդկանց պայքարելու պատրաստակամությունը, հաղթանակի հասնելու անընկճելի կամքը և երջանիկ ապագայի նկատմամբ ունեցած հավատը:

Հեքիաթն, ինքնին, դաստիարակության միջոց է, ստեղծագործական երևակայության զարգացման խթան: Երեխան կենդանական հեքիաթներով սովորում է, որ աղվեսը խաբեբայության խորհրդանիշն է, առյուծն ու արծիվը՝ հզորության, ձին՝ աշխատասիրության, գայլը՝ ագահության, էշը՝ հիմարության: Իսկ մա՞րդը… Ու այստեղ տեղ է հատկացվում արդեն ստեղծագործական մտածողությանն ու երևակայությանը:

Մենք կարծում ենք ու համոզված ենք, որ հեքիաթը կրտսեր դպրոցականի մտածողության զարգացման հիմնական միջոց է:

Ընթերցողը, հեքիաթային աշխարհում հանդիպելով որոշակի իրավիճակների, պրպտում է, գտնում հնարներ ու ելքեր, գտնում է ճիշտ ճանապարհներ, չարի ու բարու պայքարի ու հաղթանակի նոր լուծումներ, որն էլ ըստ մեզ՝ հետազոտողներիս, շատ **արդիական** է: Մեր կարծիքով, հենց այդ էլ նպաստում է ընթերցողի ստեղծագործական մոտեցման և մտածողության զարգացմանը:

Հետազոտության նպատակը

Ուսումնասիրել հեքիաթի դերը և նշանակությունը անհատի նկարագրական, երևակայական, ստեղծագործական, գեղեցիկ մտքի և խոսքի ձևավորման գործընթացում:

Հետազոտության խնդիրներն են՝

1. Վերհիշել ժողովրդական բանահյուսության տարրերը,

2. Հարստացնել աշակերտի մտահորիզոնը հեքիաթի մասին գիտելիքներով և ձեռք բերել նոր նախաբան ու վերջաբան կառուցելու կարողություն,
3. Գործնականում կարողանալ տարբերել հեքիաթների տեսակները (հրաշապատում, կենդանական, խոհական և այլն),
4. Կառուցել արտահայտիչ խոսք:

Մեթոդներ

Պատմահամեմատական մեթոդներից՝ վերլուծություն, համադրում, համեմատում, ընդհանրացում:

ԳԼՈՒԽ 1. ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

«Հեքիաթը բարոյական և մտավոր զարգացման համար շա՛տ նման է
մայրական կաթին…Այդ կաթն ինչպես սննդարար է եղել
մեզնից քառասուն դար առաջ, նույնքան սննդարար կլինի և
քառասուն դար մեզնից հետո»:
Ղ. Աղայան

Անձի ստեղծագործական մտածողության ձևավորումն ու զարգացումը արդի մանկավարժության կարևորագույն խնդիրներից մեկն է, որի լուծումը պահանջում է հետևողականություն և նպատակասլաց աշխատանք: Զարգացնել աշակերտների ստեղծագործական մտածողությունը չի նշանակում դաստիարակել ապագա գրողներ, բժիշկներ ու նկարիչներ, այն անհրաժեշտ է յուրաքանչյուր մարդու՝ անկախ հետաքրքրություններից և գործունեության ոլորտից: Մարդն իր կենսագործունեության ընթացքում անընդհատ բախվում է այնպիսի խնդիրների, որոնց լուծումը պահանջում է երևակայական հնարամտություն, ստեղծագործական մոտեցում: Յուրաքանչյուր անձի մեջ գոյություն ունի ստեղծագործական լիցք, որի դրսևորումը և զարգացումը պետք է սկսել վաղ մանկությունից, դեռևս նախադպրոցական տարիքից:

Բոլոր մանկավարժներն էլ կփաստեն, որ կրտսեր դպրոցական տարիքն առանձնահատուկ նշանակություն ունի անձի ստեղծագործականության զարգացման առումով, քանի որ այն կարող է իրականացվել ոչ միայն տարերայնորեն, այլև համակարգված՝ դպրոցում դասավանդվող առարկաների միջոցով: Ստեղծագործական մտածողության զարգացման համար դպրոցական առարկաների ոչ մի ստորակարգության անհրաժեշտություն չի զգացվում: Ըստ էության՝ գոյություն ունի մեկ առարկա՝ կյանքը, իրականությունը, որը բոլոր տեսանկյուններից է դիտարկվում՝ իր ողջ բազմազանությամբ՝ սկսած դպրոցական կոլեկտիվից, միասին լինելու հմտությունից և այն բանի ըմբռնումից, թե միասին ինչպես կարելի է ապրել ու

աշխատել: Այս դեպքում երեխան մշակույթի և ուրիշ արժեքների «սպառողը» չէ, այլ՝ դրանց «արարողը»:

Վ. Ա. Սուխոմլինսկին ասում է. «Եթե ցանկանում ես լինել գեղեցիկ, աշխատի՛ր ինքնամոռացությամբ, աշխատի՛ր այնպես, որ դու սիրելի գործում քեզ զգաս ստեղծող, վարպետ, տեր: Աշխատի՛ր այնպես, որ քո աչքերն արտահայտեն մարդկային մեծ երջանկություն, ոգեշնչվածություն ստեղծագործության երջանկությամբ»[1]:

Հեքիաթը, խաղը, երևակայությունը մանկան մտածողության, ազնիվ զգացմունքների և ձգտումների կենսատու աղբյուրներն են: Հեքիաթային կերպարների միջոցով աշակերտների գիտակցության մեջ է թափանցում բառը՝ իր նրբագույն երանգներով: Այն դառնում է երեխայի հոգեկան կյանքի ոլորտը, մտքերն ու զգացմունքներն արտահայտելու միջոցը, մտածողության կենդանի իրականությունը: Հեքիաթային կերպարների առաջացրած զգացմունքների ազդեցությամբ երեխան սովորում է մտածել բառերով: Առանց կենդանի, վառ, երեխայի գիտակցությանն ու զգացմունքներին տիրող հեքիաթի, հնարավոր չէ պատկերացնել մանկական մտածողությունն ու մանկական խոսքը՝ որպես մարդու մտածողության ու խոսքի որոշակի աստիճան: Երեխաները մեծ բավականություն են ստանում այն բանից, որ իրենց միտքն ապրում է հեքիաթային կերպարների աշխարհում: Երեխան կարող է հինգ, տասն անգամ վերապատմել հեքիաթը և ամեն անգամ նրանում հայտնագործել ինչ-որ նոր բան:

Հեքիաթային կերպարների միջոցով առաջին քայլն է կատարվում վառ, կենդանի, կոնկրետ իրականությունից դեպի վերացականը: Երեխան հիանալի գիտի, որ աշխարհում չկա ո՛չ Կախարդ Պառավ, ո՛չ Արքայադուստր Գորտ, ո՛չ Անմահ Կաշչեյ, բայց նա այդ կերպարների մեջ մարմնավորում է բարին ու չարը և ամեն անգամ պատմելով այդ հեքիաթը՝ արտահայտում է իր անձնական վերաբերմունքը վատի ու լավի նկատմամբ, երևակայում, ստեղծագործում:

Հեքիաթը նպաստում է գեղագիտական զգացմունքների զարգացմանը, առանց որոնց անիմաստ են հոգու ազնվությունն ու զգայունակությունը մարդու դժբախտության, վշտի, տառապանքի նկատմամբ: Հեքիաթի շնորհիվ երեխան ճանաչում է աշխարհը ոչ միայն մտքով, այլև սրտով: Ճանաչմանը զուգընթաց՝

[1] Վ. Ա. Սուխոմլինսկի, «Ինչպես դաստիարակել իսկական մարդ», Երևան, Լույս 1980թ., էջ 384

արձագանքում է շրջապատող աշխարհի իրադարձություններին ու երևույթներին, արտահայտում է իր վերաբերմունքը բարու և չարի նկատմամբ: Հեքիաթի միջոցով են ձեռք բերում առաջին պատկերացումները արդարության և անարդարության մասին:

Հեքիաթը՝ հայրենիքի նկատմամբ սեր դաստիարակելու բարեբեր և ոչ մի բանով չփոխարինվող աղբյուր է: Հեքիաթի հայրենասիրական գաղափարը նրա բովանդակության խորության մեջ է. ժողովրդի ստեղծած հեքիաթային կերպարները, որոնք հազարամյակներ են ապրել, երեխայի սրտին ու մտքին են հասցնում ժողովրդի հզոր ստեղծագործական ոգին, նրա հայացքները կյանքի մասին, իդեալները, ձգտումները: Հեքիաթը հարազատ երկրի նկատմամբ սեր է դաստիարակում հենց միայն այն պատճառով, որ այն ժողովրդի ստեղծածն է:

Հեքիաթներ հորինելը երեխաների հետաքրքիր աշխատանքի տեսակներից է; Այն մտավոր զարգացման կարևոր միջոց է: Ստեղծագործական մտածողության զարգացման համար գլխավորը ծեծված կաղապարներից ազատ լինելն է, երեխային հնարավորություն տալ, որ նա ստեղծի նորը: Որպեսզի երեխան կարողանա ստեղծագործել, նա պետք է ունենա զարգացած միտք՝ խոսք, կարողանա հաղորդակցվել: Կրտսեր դպրոցում սովորող յուրաքանչյուր երեխա ունի լայն հնարավորություններ, որոնք սակայն պետք է բացահայտել: Այս կարծիքին է նաև Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Հովարդ Գարդները, որի կարծիքով երեխան պետք է ներգրավվի ուսուցման մեջ իր բոլոր հնարավորություններով, հենց դա էլ նպաստում է ուսուցման գործընթացի ակտիվությանը:

Անձի ստեղծագործական մտածողության զարգացման խնդիրներով լրջորեն զբաղվել է Ջանի Ռոդարին: Կարևորելով ստեղծագործական երևակայության դերը՝ Ռոդարին այն խթանելու հնարներ և միջոցներ է առաջարկել: Նա համոզված էր, որ եթե ցանկանում ես մտածել սովորեցնել, առաջին հերթին պետք է հորինել սովորեցնես[2]: Նա կարևորում էր հեքիաթի դերը կրտսեր դպրոցականի ստեղծագործական մտածողության ձևավորման գործում: Մեր նպատակը ոչ թե երեխային հեքիաթի միջոցով գիտելիքների հաղորդումն է, այլ անձի ձևավորումը: Այս տարիքի երեխայի համար կարևոր է նրա ներաշխարհի ստեղծագործական

[2] Ջ. Գյուլամիրյան, «Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա», Երևան 2006թ.

զարգացումը: Հեքիաթային աշխարհը որոշ չափով բավարարում է երեխայի հոգևոր պահանջմունքները՝ ամենազորության անհրաժեշտությունը. հերոսը կարողանում է հաղթահարել ամեն մի դժվարություն[3]:

[3] Վ. Հարությունյան, «Հեքիաթի դերը կրտսեր դպրոցականների դաստիարակման գործում», Երևան, Լույս 1977թ.

1.1 Հեքիաթի դերը կրտսեր դպրոցականների ստեղծագործական մտածողության զարգացման գործում

Մենք՝ որպես կրտսեր դպրոցում աշխատող մանկավարժներ, կարծում ենք՝ անհնար է պատկերացնել կրտսեր դպրոցականի անձի ձևավորումը, երևակայության զարգացումն առանց հեքիաթի: Ցանկացած հեքիաթ ունի մանկավարժական մեծ ազդեցություն, այն սովորեցնում է, դաստիարակում, զգուշացնում, նույնիսկ՝ բուժում, կենտրոնացնում է երեխայի զգայական համակարգը՝ լսողությունը և տեսողությունը[4]: Երեխան հեքիաթի հերոսին ընկալում է իր սեփական երևակայությամբ, մտովի լսողից դառնում է գործող: Յուրաքանչյուր երեխա, լսելով հեքիաթը, ցանկանում է նմանվել հեքիաթի հերոսներից մեկին: Քիչ է պատահում, որ ցանկանան նմանվել բացասական հերոսի: Երեխան հեքիաթի հերոսից վերցնում է լավագույն հատկանիշները, որով օժտված է հերոսը՝ քաջություն, խիզախություն, բարություն և այլն: Նրանք ձգտում են նմանվել նրան՝ լինել բարի, արդար, ազնիվ, հնարամիտ ու հաղթող: Սա է հեքիաթի ուժը, որի բացահայտումով էլ պայմանավորված է նրա բարոյադաստիարակչական կողմը: Ուսուցիչը պետք է ունենա իր աշխատանքի վերջնարդյունքը, վստահ լինի՝ հասա՞վ արդյոք իր նպատակին, ծագե՞ց արդյոք երեխաների մեջ հեքիաթի հերոսների նկատմամբ սեր, փայլեցին արդյոք երեխայի աչքերը:

Հեքիաթի ընկալման գործում մեծ է ուսուցչի դերը, նրանից պահանջվում է այնպիսի ընդունակություններ, որ կարողանա հեքիաթը այնպես ներկայացնել, պատմել, որ նպաստի նրա անհատական ընկալմանը և դրդի, որ աշակերտները կարողանան ինքնուրույն ստեղծագործել: Հեքիաթին թույլ է տրված բացահայտել, ձևավորել աշակերտի ստեղծագործական ունակությունները, զարգացնել նրա պատկերավոր ու վերացական մտածողությունը: Հեքիաթը կարող է արտահայտել գլոբալ խնդիրներ, հավերժական թեմաներ՝ բարու և չարի, ուժեղի և թույլի մասին:

Հեքիաթը պատմելիս ուսուցիչը պետք է մտնի դերի մեջ, նրա խոսքը պետք է լինի այնքան արտահայտիչ և գեղեցիկ, որ յուրաքանչյուրն հասկանա և ընկալի այն: Ընթերցանության համար մանկական ստեղծագործություններ ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել դրանց գրական-գեղարվեստական արժանիքներն ու

[4] «Նախաշավիղ» ամսագիր 2008թ. N 4-5

առանձնահատկությունները: Միայն այս դեպքում են տվյալ աշակերտին հասնում այն բարոյական արժեքները, որը փորձում ենք զարգացնել: Աշակերտի ազնվությունը, ճշմարտախոսությունը և այլ բարոյական որակները ձևավորելու նպատակով անհրաժեշտ է նրանց ուշադրությանը ներկայացնել և՛ դրական, և՛ բացասական գործող անձիք ունեցող գեղարվեստական ստեղծագործություններ:

Երեխայի համար ամեն ինչ պետք է լինի զարմանալի, հրաշալի, հեքիաթային և ոչ հասարակ[5]:

[5] Ս. Վարդումյան, «Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ», Երևան, 2005թ.

ԳԼՈՒԽ 2. ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ԺԱՆՐԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հեքիաթը ժողովրդական բանահյուսության ամենատարածված ու սիրված ժանրերից է: Նա հերոսական ոգով, առօրյա կենսափորձից բխող առողջ բարոյախոսությամբ և խորիմաստ փիլիսոփայությամբ միշտ էլ գրավել է բոլոր տարիքի ընթերցողներին: Հարուստ, բովանդակալից ու գունագեղ է հայկական հեքիաթաշխարհը: Աչքի են ընկնում հրաշապատում-կախարդական, իրապատում-կենցաղային, կենդանական, խոհական-իմաստասիրական, երգիծական-զավեշտական և այլ բնույթի հեքիաթներ:

Հրաշապատում հեքիաթների այլաբանության ու ֆանտաստիկայի տակ դրված է ժողովրդական զանգվածների կյանքի ու պայքարի ճշմարտացի պատկերը: Իրականության մեջ չկարողանալով դիմագրավել այդ չար ուժերին՝ ժողովուրդը դրանք հաղթահարել է երևակայության օգնությամբ: Այդ նպատակով էլ հրաշապատում հեքիաթներում գործում են գերբնական զորությամբ օժտված կենդանիներ, զենքեր, առարկաներ (հրեղեն ձի, կախարդական մատանի, թուր, սանձ): Լայն տարածում ունեն այն հեքիաթներ հրաշապատումումները, որտեղ ծանր ու դժվարին արգելքներ հաղթահարելով ձեռք բերվում Հազարան բլբուլը, Անմահական ջուրը կամ խնձորը: Այդ խորհրդանիշերով ժողովուրդը արտահայտել է երջանիկ կյանքի հասնելու իր պատկերացումներն ու ձգտումները: Բարի հերոսները աշխատավորության ներքին խավի ներկայացուցիչներն են՝ ձկնորսը, հողագործը, հալածված խորթ աղջիկը և այլն: Չար ուժերի շարքում՝ դևերը, վիշապները, դաժան թագավորները, խաբեբա առևտրականներն ու բանսարկու պառավները:

Իրապատում հեքիաթներում կախարդական տարրը գրեթե բացակայում է: Աղքատի և հարուստի շահերի բախումը այս հեքիաթներում ներկայացված է իրական կյանքի կոնկրետ հարաբերությունների մեջ («Մեռած խիղճը», «Անօրենը անպատիժ չի մնա»): Իրապատում հեքիաթներում խարազանվում են բոլոր տեսակի խարդախները, մերկացվում են նրանց անմարդկային արարքներն ու ողորմելի էությունը: Դրան հակառակ մեծարվում են աշխատավոր մարդը՝ իր բոլոր արժանիքներով: Հասարակ մարդիկ աչքի են ընկնում խելացիությամբ, հնարամտությամբ ու ձեռներեցությամբ:

Կենդանական հեքիաթները առնչվում են առակներին: Գլխավոր հերոսները կենդանական և բուսական աշխարհի ներկայացուցիչներն են: Աղվեսը խաբեբայության խորհրդանիշն է, առյուծն ու արծիվը՝ հզորության, ձին՝ աշխատասիրության, գայլը՝ ագահության, էշը՝ հիմարության և այլն: Այս կենդանիների փոխհարաբերության վրա կառուցված սյուժեներով այլաբանորեն ներկայացվում են մարդկային փոխհարաբերություններն ու ժամանակաշրջանի իրադարձությունները:

Զավեշտական հեքիաթներում քննադատվում են կենցաղային թերությունները, մարդկանց բնավորության արատավոր կողմերը՝ հիմարությունը, ծուլությունը, համառությունը և այլն[6]:

Հեքիաթի ուսումնասիրումը

Բոլոր երեխաները, անկախ տարիքից ու սեռից, սիրում են հեքիաթներ լսել և կարդալ: Հեքիաթի բովանդակության հետաքրքրաշարժությունը, դեպքերի զարգացման հաջորդականությունը, պարզությունը, հաճելի ավարտն ու ենթատեքստը դյուրին են դարձնում նրա ընթերցումը:

Հեքիաթի ուսումնասիրումը տարրական դպրոցում իրականացվում է չորս քայլով.

1. Հեքիաթի ընթերցում՝ բովանդակության ամբողջական ընկալման նպատակով,
2. Հեքիաթի երևակայական կողմի բացահայտում,
3. Հեքիաթի բարոյախոսական իմաստի՝ գաղափարի (դաստիարակչական արժեք) վերհանում,
4. Հեքիաթի լեզվի և ոճի վերլուծություն[7]:

Հեքիաթի ուսումնասիրման գործընթացի առանձնահատկությունները

Բացատրական ընթերցանության մեթոդի բաղադրիչներով հեքիաթը ուսումնասիրելուց հետո՝ պիտի անցնել նրա բովանդակության երևակայական կողմի բացահայտմանը: Անհրաժեշտ է, որ աշակերտներն իրենք որոշեն, թե իրենց կարդացած հեքիաթում նկարագրված դեպքերից որոնք կարող են կատարվել

---

[6] Հայ ժողովրդական հեքիաթներ, «Արևիկ», 2004թ. Երևան

[7] Ջ. Գյուլամիրյան, «Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա», Երևան, «Զանգակ», 2015թ.

իրականում(Կարմիր գլխարկը կարող է կարկանդակ տանել տատիկին, գայլին հանդիպել), որոնք անիրական են, մտացածին, երևակայական (նա չի կարող գայլի հետ հաղորդակցվել, որսորդները չեն կարող գայլի փորից հանել Կարմիր գլխարկին և տատիկին):

Հեքիաթի շուրջ աշխատանքի ընթացքում պիտի կարևորել կերպարների այն արարքները, որոնց շուրջ զարգանում են հեքիաթի դեպքերը: Դրանց միջոցով են որոշվում գլխավոր հերոսների արարքների դրդապատճառները, հեքիաթի տրամաբանությունն ու հիմնական միտքը:

Հիմք ընդունելով հեքիաթի բովանդակային բաղադրիչները՝ պետք է աշակերտների ուշադրությունը հրավիրել բանալի բառերի ու արտահայտությունների վրա, քանի որ հենց դրանց միջոցով է որոշվում կերպարների հոգեվիճակը, արարքների դրդապատճառները, հերոսի ինչպիսին լինելը, հեղինակի վերաբերմունքը նրա նկատմամբ: Օրինակ՝ Ղ. Աղայանի «Կամակոր այծերը» հեքիաթն ընթերցելիս կարելի է առաջադրել. «Գտեք այն բառը, արտահայտությունը, որը ձեզ համոզեց, որ երկու այծերն էլ կամակոր են»: Պետք է կարևորել աշակերտի զգացմունքային վերաբերմունքը կերպարների նկատմամբ: Օրինակ՝ «Ինչո՞ւ աղվեսն այդպես վարվեց արագիլի նկատմամբ» «Աղվեսն ու արագիլը» հեքիաթն ընթերցելիս:

Աշակերտներին կարելի է տալ օգնող պատասխանների խումբ:

1) Ուզեց կատակել,
2) Չգիտեր, որ արագիլը չի կարող այդպիսի պնակից օգտվել,
3) Աղվեսը հյուրասեր չէր:

Պետք է թույլ տալ, որ աշակերտն ինքը հիմնավորի իր ընտրած պատասխանը:

Ներկայացնենք հեքիաթի ուսումնասիրման մեկ փոխգործուն մեթոդական հնար, որը հարմար է կիրառել առաջին դասարանում այբբենական շրջանում:

«Խառնված հերթականություն»

Ուսումնասիրվող ստեղծագործությունը՝ «Մեղուն ու հավը» (Ղ.Աղայան)

Մեթոդական հնարը պետք է կազմակերպել ստեղծագործության ամբողջական ուսումնասիրությունից հետո՝ կշռադատման փուլում:

- Նախապես հեքիաթի բնագիրը պատճենահանել երեք օրինակով:
- Յուրաքանչյուր բնագիր բաժանել յոթ հատվածի (կտրել) և տեղավորել երեք ծրարի մեջ:
- Դասարանը 1-3 հաշվով բաժանել երեք խմբի:

Ընթացքը

Յուրաքանչյուր խումբ ստանում է մեկ ծրար՝ առաջադրանքը:

Առաջադրանք՝

_ Դիտարկեք ծրարի բովանդակությունը: Խառնված նախադասությունները դասավորեք այնպես, որ պատմությունն ամբողջանա:

- Բոլոր խմբերն էլ առանձին-առանձին ներկայացնում են իրենց հյուսած պատմությունը:
- Խմբերը գնահատում են միմյանց աշխատանքի արդյունքը:

Մեկնաբանություն

Այս աշխատանքը նպաստում է աշակերտների՝ խոսք կառուցելու կարողության զարգացմանը, բառապաշարի հարստացմանը, ստեղծագործական կարողությունների և մտածողության ձևավորմանը: Ձևավորվում է նաև համագործակցություն, համախմբվածություն, փոխզիջման ունակությունները:

Կարևոր հանգամանք

Հեքիաթի երևակայական կողմը բացահայտելիս ուսուցիչը չպետք է ակտիվ դեր կատարի. Երեխաներն իրենք պետք է որոշեն, թե ինչին են հավատում, ինչին՝ ոչ:

Հեքիաթն այն ստեղծագործություններից է, որը կարելի է կարդալ դերերով և բեմականացնել: Սա մեծ բավականություն է պատճառում երեխաներին, սակայն դերերով կարդալուց առաջ պետք է կատարել բովանդակության և գաղափարի վերլուծություն, կերպարների բնավորությունների քննարկում, նրանց վարքի դիտարկում, ընտրովի ընթերցանություն: Այս ամենից հետո կարելի է անցնել հեքիաթի բեմականացմանը:

Ե՛վ նախադպրոցական, և՛ կրտսեր դպրոցական տարիքի երեխաները սիրում են ունկնդրել հեքիաթներ: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ ուսուցիչը պետք է դասի ժամանակ հեքիաթներ պատմի: Նրա վառ ու տպավորիչ խոսքի արդյունքում աշակերտները կզգան հեքիաթի լեզվի և ոճի հմայքը:

Երեխաներին անչափ դուր է գալիս հեքիաթը ստեղծագործելով, փոփոխելով պատմելը: Առավել ևս օգտակար է հեքիաթին շարունակություն հյուսելը, որը նպաստում է ոչ միայն խոսքի զարգացմանը, այլև երևակայության թռիչքին:

Կարդացած հեքիաթները պատմելիս պետք է հասնել նրան, որ երեխաները հարազատ մնան նրա լեզվին և ոճին, պատմեն հենց այն բարբառով, որով գրված է, գործածեն հերոսների խոսքերը, ժողովրդի բառն ու բանը:

Հեքիաթի ուսումնասիրման դասի մեթոդական շղթան

- Նախապատրաստական զրույց հեքիաթի թեմայի շուրջ (խթանման փուլ),
- Հեքիաթի ընթերցում մտքում (աշակերտների կողմից),
- Հեքիաթի ամբողջական ընթերցում,
- Բարձրաձայն ընթերցանություն մեկնաբանություններով (աշակերտ),
- Բառային աշխատանք,
- Բնագրի ընթերցում՝ արտահայտիչ ընթերցանության կարողությունների ձևավորման նպատակով,
- Աշխատանք հեքիաթի երևակայական կողմի, լեզվի և ոճի առանձնահատկությունների, հիմնական մտքի, դաստիարակչական գաղափարի բացահայտման, ենթատեքստի կռահման ուղղությամբ (իմաստավորման փուլ),
- Պատմելու նախապատրաստում, պատմում,
- Ամփոփում (կշռադատման փուլ):

Ներկայացնենք հեքիաթի ուսումնասիրման փոխգործուն մեթոդական մի հնար[8]:

<u>«Օդապարիկ»</u>

Ուսումնասիրվող նյութը՝ «Յոթ փայլուն աստղ» (հնդկական ժողովրդական հեքիաթ)

[8] Ջ.Գյուլամիրյան, «Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա», Երևան, «Զանգակ», 2015թ.

Նախապատրաստում - Պատրաստել օդապարիկ և յոթ ծրար կամ յոթ փոքրիկ պատկեր, որոնց մեջ պիտի լցվեն հեքիաթի բովանդակության վերլուծությունից վերցրած յոթ արժեք (հիմնաբառ):

Ընթացքը – Ուսուցիչը բացատրում է օդապարիկի թռիչքի կանոնները և մեկնաբանում, թե նրանք ինչ դեր ունեն այդ ընթացքում:

Հանձնարարություն- Ճերմակ թղթի վրա գրեք այն յոթ արժեքները, որոնք դուք առանձնացրիք հեքիաթում կատարված գործողությունները քննարկելիս:

Ճերմակ թղթերը համարակալվում են և յուրաքանչյուր խումբ իր գրածն ամրացնում է պարանին: Դասարանը քննարկում և առանձնացնում է այն յոթ արժեքները, որոնք կրկնվում էին բոլոր խմբերի թղթերում: Գրատախտակին գրվում են այդ բառերը՝ սեր, հոգատարություն, առատաձեռնություն, համարձակություն, զսպվածություն, գնահատանք:

Նախապատրաստում – Աշակերտներն այդ բառերը գրում ու դնում են պարկերի մեջ:

Ուսուցիչ – Մենք ունենք յոթ պարկ: Սրանք պիտի կարգավորեն մեր օդապարիկի թռիչքը: Թռչելու համար պետք է դեն նետենք պարկերը, որ օդապարիկը թեթևանա և օդ բարձրանա: Եկեք որոշենք, թե ըստ այս հեքիաթի բովանդակության, որն է այն կարևոր բառը, որը պիտի պահենք մինչև վերջ:

Աշակերտները դժվարությամբ են որոշում բառերի կարևորությունը (չէ՞ որ դրանք արժեքներ են), հերթով «գցում են» բառերը և մեկնաբանում դրանցից յուրաքանչյուրի դերն իրենց կյանքում:

Կշռադատում – Հեքիաթի յոթ ադամանդները, որոնք դարձան աստղեր և փայլեցին երկնքում, կերպարների արժեքներն էին:

Մեկնաբանում – Այս մեթոդական հնարը նպաստում է քննադատական մտածողության, վերլլուծական-համադրական կարողության, կշռադատելու ունակության զարգացմանը: Կարևորն այստեղ այն չէ, թե աշակերտները որ արժեքը կպահեն, որը կգցեն: Կարևորն այդ արժեքների շուրջ նրանց մեկնաբանություններն են: Աշակերտների նշած բոլոր արժեքներն էլ կարևոր են:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մեզ՝ ուսուցիչներիս միշտ մտահոգում է այն հարցը, թե ինչպես անել, որ երեխաները խորապես իմանան մայրենի լեզուն, որ մայրենի բառը մտնի նրանց հոգեկան կյանքի մեջ, դառնա և՛ դիպուկ, սուր, և՛ գունեղ ներկապնակ, և՛ իրականությունը ճանաչելու նուրբ միջոց: Լեզուն մտքի նյութական արտահայտությունն է, և երեխան դա կիմանա միայն այն ժամանակ, երբ իմաստի հետ միասին ընկալի նրա վառ հուզական երանգավորումը: Առանց բառի գեղեցկությունը զգալու երեխայի համար անհասկանալի են նրա իմաստի նվիրական սահմանագծերը: Իսկ գեղեցկության զգացումն անիմաստ է՝ առանց երևակայության, առանց հեքիաթի հյուսման գործընթացի: Հեքիաթը գեղարվեստական ստեղծագործություն է, որը կլանում է երեխայի հոգեկան կյանքի բոլոր ոլորտները՝ նրա զգացմունքները, երևակայությունը, կամքը, ստեղծագործական միտքը:

Եթե ուզում ենք, որ երեխաները ստեղծագործեն, անհրաժեշտ է նրանց գիտակցության մեջ տեղափոխել մեր ստեղծագործության կրակից թեկուզ մի փոքրիկ կայծ: Պետք է սովորողներին հանձնարարել շատ հեքիաթներ կարդալ, հասկանալ հեքիաթի բարոյախրատական դաստիարակության իմաստը, վերարտադրել հեքիաթներ սեփական բառերով, տարբերել հեքիաթների տեսակները, իրականն ու անիրականը, հայտնել իրենց կարծիքը հեքիաթի հերոսների վերաբերյալ, հորինել հեքիաթի նոր նախաբան, փոփոխել հեքիաթի վերջաբանը:

Մենք՝ հետազոտողներս եկանք այն եզրակացության, որ հեքիաթն է այն արդյունավետ միջոցը, որը կարող է կրթել ու դաստիարակել ինքնուրույն մտածող, բարի, աշխատասեր, կարդացածին քննադատորեն մոտեցող անհատներ՝ զարգացնելով անձի ոչ միայն ստեղծագործական կարողությունները, այլև մտքի ճկունությունը, երևակայությունը, կապակցված խոսքը:

Եթե ուրաքանչյուր ուսուցիչ ուսումնական ծրագրով և չափորոշիչներով նախատեսված նյութի հետ մեկտեղ ուսուցման գործընթացում գոնե տասը րոպե տրամադրի աշակերտների ստեղծագործական կարողությունների զարգացմանը, ապա ոչ միայն զարկ կտա կրտսեր դպրոցականի մտածողության զարգացմանը, այլև դասերը կանցնեն առավել հետաքրքիր և աշխույժ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գյուլամիրյան Ջ. ‹‹Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա››, Երևան ‹‹Զանգակ››, 2015թ.
2. Գյուլամիրյան Ջ., ‹‹Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա›› - Երևան 2006թ.
3. Հարությունյան Վ., ‹‹Հեքիաթի դերը կրտսեր դպրոցականների դաստիարակության գործում›› Երևան, Լույս 1977թ.
4. Սուխոմլինսկի Վ. Ա., ‹‹Ինչպես դաստիարակել իսկական մարդ››, Երևան, Լույս 1980թ., էջ 384
5. Վարդումյան Ս., ‹‹Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ››, Երևան, 2005թ.
6. Հայ ժողովրդական հեքիաթներ, ‹‹Արևիկ››, Երևան, 2004թ.
7. ‹‹Նախաշավիղ›› ամսագիր, 2008թ. N 4-5